ջանքերը ներդնում՝ ատոմային ուժը միայն խաղաղ նպատակներով կիրառելու և էներգիա ստանալու համար: Հայաստան կատարած իրենց այցելության նպատակն է պարզել, թե ինչպես կարող է կազմակերպությունն օգտակար լինել Մեծամորի ատոմակայանի անվտանգ գործունեությունը լիարժեք կերպով ապահովելուն:

Վեհափառ Հայրապետն իր երախտագիտությունն ու գնահատանքն արտահայտելով «ՄԱԳԱՏԷ»-ին պատերազմների կասեցման դեմ ուղղված նրա խաղաղարար գործունեության և հատկապես Հայաստանի հանդեպ ցուցաբերած մտահոգության և օգնության պատրաստակամության համար, նշեց, որ Եկեղեցին նույնպես պետք է անմասն չմնա այդ աշխատանքում և գործադրի բոլոր հնարավորությունները հանուն խաղաղության պահպանման և ամրապնդման:

«ԵՐԿԻՐ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հուլիսի 30-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին «Երկիր և մշակույթ» համահայկական կազմակերպության անդամները՝ դեկավարներ Պիեռ և Անիտա Հակոբյանների և Հասմիկ Գազազյանի գլխավորությամբ: Միացյալ Նահանգներից և Եվրոպայից ժամանած երիտասարդության ներկայացուցիչներին Վեհափառի ընդունելությունների սրահում ընդունեց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Տեղի ունեցած մտերմիկ զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետն արտահայտեց իր ուրախությունը երիտասարդների այցելության առթիվ և բարձր գնահատեց նրանց կատարած կամավորական աշխատանքները՝ ուղղված Արցախի երկու գյուղերի, ինչպես նաև Տաթևի վանքի վերակառուցմանը: Նորին Սրբությունը նշեց, որ մեր Եկեղեցին, թոթափելով 70 տարիների կոմունիստական բռնակալության լուծը, այժմ հարություն է առել և նոր կյանքով է ապրում: Վեհափառ Հայրապետը շեշտեց այն միտքը, որ ողջ հայության համար հայրենիքը միակն է, և մենք բոլորս պիտի մեր մասնակցությունն ունենանք նրա վերակառուցման, վերաշինության, բարգավաճման գործընթացին: Բավական չէ միայն հպարտանալ մեր ժառանգած հոգևոր, մշակութային, գիտական հարստությամբ, անհրաժեշտ է նաև շարունակել մեր հայրերի գործը, ավանդույթը, զարգացնել և ծաղկեցնել մեր երկիրը: Հատկապես երիտասարդ սերունդը դեռևս շատ անելիքներ ունի, և երիտասարդությանը պետք է ակտիվորեն ներգրավել մեր հայրենիքի և Հայ Եկեղեցու կյանքում: Այդ նկատառումներից ելնելով էլ լուրջ աշխատանքներ են տարվում երիտասարդ սերնդի քրիստոնեական դաստիարակության ուղղությամբ: Դպրոցներում սովորողների ցանկությամբ կազմակերպվում են կրոնի դասընթացներ, կիրակնօրյա դպրոցներ, ինչպես նաև հատուկ դասընթացներ՝ կրոնի ապագա ուսուցիչների համար, հրատարակվում են կրոնական բնույթի քացատրական և ուսուցողական բազմաթիվ գրքույկներ:

Խումբը շրջեց նաև Մայր Աթոռի թանգարաններում և հիացավ հայ եկեղեցական արվեստի գործերով:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ